




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«16» մայիս 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Ս. Անանյան

ԳԲԽ-47/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Կարս» ՍՊԸ-ի 29.04.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Կարս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Կարս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 29.04.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը, ուսումնասիրելով ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/4» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հրավերը, հայտ է ներկայացրել և մասնակցել նշված Ընթացակարգին:

Ընկերությունը հայտ է ներկայացրել Ընթացակարգի 63-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով և ներկայացրել է գնային առաջարկ՝ 61 200 000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Կարս» ՍՊԸ-ին:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «Կարս» ՍՊԸ-ի հայտը՝ գնահատելով հրավերի պահանջներին չհամապատասխանող, պատճառաբանելով, որ Ընկերության կողմից հայտը ներկայացնելու նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է ներկայացված գնային առաջարկից՝ հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը, համաձայն որի՝ Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 8 160 000 ՀՀ դրամ:

Ընկերությունը բողոքով նշել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության եզրակացության մեջ ամրագրված 8 160 000 ՀՀ դրամը հանդիսանում է Ընկերության 2013թ. համախառն եկամտի հանրագումարը, մինչդեռ նշված եզրակացության մեջ չի ներառվել «Կարս» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն (2016թ.) նախորդող՝ երեք հաշվետու տարիների (2013թ., 2014թ. և 2015թ.) համախառն եկամտի հանրագումարը:

Ընկերությունը հայտնել է, որ «Կարս» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 62923672 ՀՀ դրամ, որից՝ 2013թ.՝ 8 160 000 ՀՀ դրամ, 2014թ.՝ 0 ՀՀ դրամ (Ընկերությունը գործունեություն չի իրականացրել) և 2015թ.՝ 54 763 672 ՀՀ դրամ:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝

- «Կարս» ՍՊԸ-ի հայտի՝ հրավերի պահանջներին ահամապատասխանության մասին որոշումը.

- «Կարս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին 26.04.2016թ. որոշումը.

- Ընթացակարգի 63-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը.

- Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել Ընթացակարգի 63-րդ չափաբաժնի մասով Պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու գործընթացը՝ մինչև ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ խորհուրդ) կողմից համապատասխան որոշում կայացնելը, որը բավարարվել է ԳԲԽ-47/16 բողոքը քննող հանձնաժողովի 05.05.2016թ. միջանկյալ որոշմամբ:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ իր կողմից ներկայացված գնային առաջարկը կազմում է 61 200 000 ՀՀ դրամ, իսկ Ընկերության կողմից հայտը ներկայացնելուն (2016թ.) նախորդող հաշվետու երեք տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 62 923 672 ՀՀ դրամ, այսինքն հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ գնային առաջարկից:

Ընկերությունը գտնում է, որ «Կարս» ՍՊԸ-ի որակավորումը բավարարում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» չափանիշին, քանի որ «Կարս» ՍՊԸ-ի հայտը համապատասխանում է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված և Ընացակարգի հրավերի պահանջներին:

Ընկերությունը բողոքին կից ներկայացրել է հարկային տեսչություն ներկայացված 2013թ.-ի և 2015թ.-ի շահութահարկի հաշվետվությունները, որոնցում արտացոլված են տվյալ հաշվետու տարիների «Կարս» ՍՊԸ-ի համախառն եկամուտը:

Ընկերությունը հայտնել է նաև, որ իր կողմից ներկայացված գնային առաջարկը Ընթացակարգի 63-րդ չափաբաժնի համար կազմում է 61 200 000 ՀՀ դրամ, որը տվյալ չափաբաժինների համար ներկայացված գնային առաջարկներից ամենացածր գնային առաջարկն է հանդիսանում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-47/16 բողոքը քննող հանձնաժողովի 05.05.2016թ. ժամը 17:30-ին կայացած նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ պաշտպանության նախարարությունը 10.05.2016թ. թիվ ԴՎԱ/1246 գրությամբ ներկայացրել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ Ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացվել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված Կարգի 48-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ «Կարս» ՍՊԸ-ի տվյալները «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով չէին համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին, մասնավորապես՝ մասնակցի գնային առաջարկը կազմում էր 61 200 000 (վաթսունմեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում էր 8 160 000 (ութ միլիոն հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որը Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն չպետք է պակաս լինի ներկայացված գնային առաջարկից:

Հիմք ընդունելով վերոհիշյալ փաստը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է «Կարս» ՍՊԸ-ի հայտը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները իրավաչափ են և մասնակցի հայտը մերժելու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բոլոր հիմքերը առկա են:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-47/16 բողոքը քննող հանձնաժողովի 05.05.2016թ. ժամը 17:30-ին կայացած նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-47/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-47/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անհրաժեշտ գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. «Կարս» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անհրաժեշտ գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով **20.02.2016թ.** հայտ է ներկայացրել:

3. Ընկերությունը հայտի N 3.3 հավելվածով հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամրի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

4. Ընկերությունը հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 63-րդ չափաբաժնի համար՝ ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, որի ընդհանուր գինը կազմել է **61 200 000 ՀՀ դրամ:**

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.03.2016թ. որոշմամբ «Կարս» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 63-րդ չափաբաժնի մասով:

6. Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 23.03.2016թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Կարս» ՍՊԸ-ի վերաբերյալ:

7. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.03.2016թ. Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ **«Կարս» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն (20.02.2016թ.) նախորդող երեք հաշվետու տարիների (2013թ., 2014թ., 2015թ.) համախառն եկամուտի հանրագումարը կազմում է 8 160 000 ՀՀ դրամ:**

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.03.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1-րդ կետով կայացված որոշմամբ «Կարս» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

9. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անհրաժեշտ գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊԶԲ-10/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.04.2016թ. կայացրել է պայմանագիր կնքելու մասին որոշում, որի մասին հայտարարությունը www.gnumner.am համացանցային կայքում հրապարակվել է 27.04.2016թ.՝ սահմանելով անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ:

10. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 10.05.2016թ. թիվ 01/04.1/1807-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե ինչքան է կազմում «Կարս» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն (2016թ.) նախորդող (2013թ., 2014թ., 2015թ.) երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը:

11. Սույն եզրակացությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացնելու օրվա դրությամբ՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից

չի ստացվել Կենտրոնի 10.05.2016թ. թիվ 01/04.1/1807-16 գրությանն ի պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համապատասխան պատասխանը:

4. ԳԲԽ-47/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Կարս» ՍՊԸ-ի 29.04.2016թ. ներկայացրած բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 10.05.2016թ. թիվ ԴՎԱ/1246 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.03.2016թ. տրամադրված եզրակացությունը, հայտնում է հետևյալը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով

նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվեքույր տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:

«Կարս» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անհրաժեշտ գրասենյակային գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/9-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊԶԲ-10/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի մասնակցության 20.02.2016թ. հայտի N 3.4 հավելվածով հայտնել և հավաստել է, որ ***հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվեքույր տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից:***

Ընկերությունը հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 63-րդ չափաբաժնի համար՝ ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, որի ընդհանուր գինը կազմել է **61 200 000** ՀՀ դրամ:

Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 23.03.2016թ. կատարված հարցմամբ խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Կարս» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացվել է եզրակացություն, համաձայն որի՝ **«Կարս» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն (20.02.2016թ.) նախորդող երեք հաշվետու տարիների (2013թ., 2014թ., 2015թ.) համախառն եկամուտի հանրագումարը կազմում է 8160000 ՀՀ դրամ:**

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված եզրակացությունը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.03.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1-րդ կետով կայացված որոշմամբ «Կարս» ՍՊԸ-ի հայտը մերժել է՝ պատճառաբանելով, որ Ընկերության կողմից հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը պակաս է ներկայացված գնային առաջարկից:

Ընկերությունը ներկայացված բողոքով նշել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարությունը իր եզրակացության մեջ չի ներառել Ընկերության 2015թ. համախառն եկամուտը և այն, որ «Կարս» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտը կազմում է ոչ թե **8 160 000** ՀՀ դրամ է, այլ՝ **62 923 672** ՀՀ դրամ, ի հավաստումն որի Ընկերությունը բողոքին կցել է 2015թ. շահութահարկի գծով հաշվետվությունները:

Կենտրոնը 10.05.2016թ. թիվ 01/04.1/1807-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե ինչքան է կազմում «Կարս» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն (2016թ.) նախորդող (2013թ., 2014թ., 2015թ.) երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը, սակայն սույն եզրակացության տրամադրման օրվա դրությամբ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից համապատասխան պատասխան չի ստացվել:

Այսպիսով, Կենտրոնը սույն եզրակացությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացնելու օրվա դրությամբ չի ստացել Կենտրոնի 10.05.2016թ. թիվ

01/04.1/1807-16 գրության ի պատասխան ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի համապատասխան գրությունը, որով կհաստատվեր Ընկերության կողմից նշված չափի (62 923 672 ՀՀ դրամ) համախառն եկամուտ ունենալու հանգամանքը:

Հետևաբար, Կենտրոնը, հիմք ընդունելով Պատվիրատուի կողմից Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 23.03.2016թ. կատարված հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.03.2016թ. տրամադրված եզրակացությունը, համաձայն որի՝ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է գնային առաջարկից գտնում է, որ Ընկերության բոլորը նման պայմաններում ենթակա է մերժման:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «Կարս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 29.04.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի վարիչ՝



Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-47/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Ծատուրյան